ԱՐՀՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԱՆՑՈՒԴԱՐՁ

ՀՈՒՆԿԱՐ 2024

#1

Հայաստանի արհմիությունների
կոնֆեդերացիա

Բովանդակություն

Ողջույնի խոսք

Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի նախագահի այցը Սյունիքի մարզ, քաղաք Քաջարան

Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի նախագահի հարցազրույցը հանրային ռադիոյի «Ձեր փաստաբանը» հաղորդաշարին

ՀՀ ԿԳՄՍ նախարարությունը պատասխանել է ՀԱՄԿ-ի՝ «ՆԶՊ» առարկա դասավանդող ուսուցիչների ատեստավորման արդյունքով ուսուցչի դրույքաչափի սահմանման և դրան հատկացվող հավելավճարի հաշվարկման կարգի վերաբերյալ պարզաբանում տրամադրելու գրությանը

«Ձատագովության կարողությունների զարգացման» դասընթացի երկրորդ փուլ

«Մասնագիտական կրթության և ուսուցման մասին» օրենսդրական բարեփոխումներն ու հիմնարար ուղղությունները» թեմայով խորհրդարանական լսումներ

Հուշագրի կնքում Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի մշտական գործող աշխատանքային հարաբերություններում հավասարության հարցերով հանձնաժողովի, Երևանի և հարակից մարզերի կին գործատուների միության միջև

Բարի գալուստ,
«Արհմիութենական անցուդարձ» ամսագիր

«Արհմիութենական անցուդարձը» հանդիսանում է Հայաստանում արհմիութենական առաջին էլեկտրոնային ամսագիրը, որի նպատակն է տարածել և հանրահռչակել Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի (ՀԱՄԿ) յուրաքանչյուր ամսվա կատարած աշխատանքների մասին տեղեկատվություն:

Ամսագրում տեղ գտած նյութերը կհետաքրքրեն ընթերցողներին, հնարավորություն կընձեռնեն համապարփակ և ամփոփ տեղեկատվություն ստանալու արհմիութենական անցուդարձի և աշխատանքային իրավունքների վերաբերյալ:

Հայաստանի արհմիությունների
կոնֆեդերացիայի աշխատակազմ

Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի նախագահի այցը Սյունիքի մարզ, քաղաք Քաջարան

ՀԱՄԿ-ի նախագահ Էլեն Մանասերյանը, Լեռնագործների, մետալուրգների և ոսկերիչների արհեստակցական կազմակերպությունների ՃՀՄ նախագահ Էդուարդ Փահլևանյանը և ՀԱՄԿ-ի հետ համագործակցող փաստաբան Նաիրա Համբարձումյանը Սյունիքի մարզի Քաջարան քաղաքի մշակույթի տանը 2024 թվականի հունվարի 13-ին հանդիպեցին Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի արտադրամասերում գործող արհմիությունների նախագահների, ինչպես նաև գործատուի ներկայացուցիչների հետ: Հանդիպման ընթացքում քննարկվեցին ՀՀ աշխատանքային օրենսգրքում տեղի ունեցած այն փոփոխությունները, որոնք դեռևս պարզաբանման կարիք ունեին: Ն.Համբարձումյանը ներկայացրեց ոլորտում իրավակիրառ և դատական պրակտիկ գործերը ։

Մասնակիցները խոսեցին ներկա խնդիրների մասին, ներկայացրին նաև պրակտիկայում իրավական ակտերի անկատարության պատճառով առաջացող ամենօրյա խոչընդոտները: ՀԱՄԿ-ի նախագահը խոստացավ բարձրացրած հարցերը քննարկել սոցիալական գործընկերության շրջանակներում պատկան մարմինների հետ:
ԶՊՄԿ արհեստակցական կազմակերպության արհմիությունների նախագահները նշեցին, որ նման դեմ առ դեմ հանդիպումներն արդյունավետ են և նպաստում են արհմիության աշխատանքների լավարկմանը:

Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի նախագահի հարցազրույցը հանրային ռադիոյի «Ձեր փաստաբանը» հաղորդաշարին

Ի՞նչ է արժանապատիվ աշխատանքը, ինչպիսի՞ն է ՀՀ դիրքը և ի՞նչ անելիքներ ունի պետությունը միջազգային չափորոշիչներին համապատասխանելու համար:

Տեսանյութը կարող եք դիտել՝ հետևելով այս հղմանը https://shorturl.at/brQ58

ՀՀ ԿԳՄՍ նախարարությունը պատասխանել է ՀԱՄԿ-ի՝ «ՆԶՊ» առարկա դասավանդող ուսուցիչների ատեստավորման արդյունքով ուսուցչի դրույքաչափի սահմանման և դրան հատկացվող հավելավճարի հաշվարկման կարգի վերաբերյալ պարզաբանում տրամադրելու գրությանը

«ՆԶՊ» առարկա դասավանդող մի շարք ուսուցիչներ ատեստավորման արդյունքով ուսուցչի դրույքաչափի և դրան հատկացվող հավելավճարի տրամադրման կարգի շուրջ առաջացած հարցերով 2023 թվականի դեկտեմբերին դիմել էին Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիա (ՀԱՄԿ)։

Ուսուցիչների դիմումների հիման վրա ՀԱՄԿ-ը ՀՀ ԿԳՄՍ նախարարությանը գրությամբ խնդրել էր պարզաբանել «ՆԶՊ» առարկա դասավանդող ուսուցիչների ատեստավորման արդյունքով ուսուցչի դրույքաչափի սահմանման և դրան հատկացվող հավելավճարի հաշվարկման կարգը, քանի որ նրանց դեպքում դրույքաչափը բարձրանում է «Ուսուցիչների կամավոր ատեստավորման, կամավոր ատեստավորման արդյունքով ուսուցչի դրույքաչափի և դրան հատկացվող հավելավճարի տրամադրման, կամավոր ատեստավորման հանձնաժողովի ձևավորման կարգը հաստատելու» 2022 թվականի ապրիլի 28-ի ՀՀ կառավարության N 596-Ն որոշման համաձայն՝ դառնալով 200000 ՀՀ դրամ։

«ՆԶՊ» առարկա դասավանդող կամավոր ատեստավորված ուսուցիչների համար նախատեսված հավելավճարի հաշվարկման նպատակով 200000 ՀՀ դրամը բաժանվում է 22 դասաժամի, մինչդեռ այդ ուսուցիչները վճարվում են այլ դրույքաչափով (11 ժամը՝ մեկ դրույք)։

Ի պատասխան ՀԱՄԿ-ի գրության՝ ՀՀ ԿԳՄՍ նախարարությունը տրամադրել է պարզաբանում, որին կարող եք ծանոթանալ ստորև.

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ,
ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ,
НАУКИ, КУЛЬТУРЫ И СПОРТА
ЗАМЕСТИТЕЛЬ МИНИСТРА

REPUBLIC OF ARMENIA
MINISTRY OF EDUCATION,
SCIENCE, CULTURE AND SPORT
DEPUTY MINISTER

0010, Երևան, Վ. Սարգսյան 3, Կառավարական տուն 2, Հեռ./Тел./Tel.: +374 10 59 96 00, ֆաքս/факс/fax (374 10) 52 73 43,
0010, Ереван, В. Саргсян 3, Дом правительства 2, 0010, V. Sargsyan 3, Government House 2, Yerevan, secretariat@escs.am,
www.escs.am

N 02/09.3/1062-2024

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐՀՍԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՆՖԵԴԵՐԱՑԻԱՅԻ ՆԱԽԱԳԱՀ
ԷԼԵՆ ՄԱՆԱՍԵՐՅԱՆԻՆ
hamk@hamk.am

Ի պատասխան Ձեր 20.12.2023 թ. թիվ 05-01/78 գրության:

Հարգելի՛ Էլեն Մանասերյան

Տեղեկացնում եմ, որ ՀՀ կառավարության 2022 թվականի ապրիլի 28-ի N 596-Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջի համաձայն՝ ատեստավորման արդյունքում ուսուցիչը **հավելավճար է ստանում դասավանդվող /մանկավարժական/ ժամերին համապատասխան** օրենսդրությամբ սահմանված կարգով տրամադրվող աշխատավարձի նկատմամբ կիրառվող համապատասխան տոկոսի չափով՝ անկախ նրանից, թե որ առարկայից է ատեստավորվել: Աշխատավարձի հաշվարկը չի ներառում հավելավճարներն ու լրավճարները:

Հիշեցնեմ, որ նշված կարգի 76-րդ կետի 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ ենթակետերով սահմանված արդյունք ցուցաբերած ուսուցիչների դրույքաչափը փոխվում է՝ սահմանվելով 200.000 դրամ՝ մեկ դրույք զբաղվածության համար, նույն կարգի 76-րդ կետի 1-ին, 2-րդ և 3-րդ ենթակետերի դեպքում այդ դրույքաչափի նկատմամբ հաշվարկվում է համապատասխան չափով հավելավճարը. Սույն կետով սահմանված դրույքաչափը նվազեցման ենթակա չէ:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ քննարկելով բարձրացված հարցը, որոշվել է կամավոր ատեստավորման արդյունքում «ՆՁՊ» առարկան դասավանդող ուսուցիչների հավելավճարները և դրույքաչափի փոփոխությունը հաշվարկելիս կիրառել իրավական կոլիզիաների լուծման կանոնները՝ առավել բարենպաստ նորմատիվ իրավական ակտի նորմը՝ համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի՝ հաշվի առնելով, որ «ՆՁՊ» առարկան դասավանդող ուսուցիչների

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐՀՍԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՆՖԵԴԵՐԱՑԻԱ
ՀԱՍԿ•ԿՊԱ•CTUA•ՀԱՍԿ

համար աշխատավարձի հաշվարկը կատարվում է՝ հիմք ընդունելով ՀՀ կրթության և գիտության նախարարի 2011 թվականի նոյեմբերի 9-ի N 1222-Ն և ՀՀ պաշտպանության նախարարի 2011 թվականի նոյեմբերի 10-ի N 1356-Ն համատեղ հրամանների պահանջը:

X

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ **ԱՐԱՔՍԻԱ ՍՎԱՋՅԱՆ**

Կատարող՝ հանրակրթության վարչության
հանրակրթական և արտադպրոցական ծրագրերի մշակման
և իրականացման բաժնի գլխավոր մասնագետ Աննա Խաչատրյան,
հեռ.՝ (+374) 10-599-620

«Ջատագովության կարողությունների զարգացման» դասընթացի երկրորդ փուլ

«Ջատագովության կարողությունների զարգացման» դասընթացի երկրորդ փուլը տեղի ունեցավ 2024 թվականի հունվարի 19-ից 21-ը, որտեղ երիտասարդ արհմիութենականները ձեռք բերեցին ջատագովության և իրազեկման արշավների պլանավորման և իրականացման գործնական հմտություններ։

«Մասնագիտական կրթության և ուսուցման մասին» օրենսդրական բարեփոխումներն ու հիմնարար ուղղությունները» թեմայով խորհրդարանական լսումներ

2024 թվականի հունվարի 24-ին ՀԱՄԿ-ի նախագահի տեղակալ Տիրուհի Նազարեթյանը, Հայաստանի բուհերի արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության նախագահ Արմեն Ավետիսյանը, ՀԱՄԿ-ի աշխատակազմի իրավաբան Աննա Բարիկյանը մասնակցել են ՀՀ Ազգային Ժողովում կայացած «Մասնագիտական կրթության և ուսուցման մասին» օրենսդրական բարեփոխումներն ու հիմնարար ուղղությունները» թեմայով խորհրդարանական լսումներին, որտեղ ՀԱՄԿ-ի նախագահի տեղակալ Տիրուհի Նազարեթյանը հանդես եկավ ելույթով:

Տեսանյութը կարող եք դիտել՝ հետևելով այս հղմանը
https://shorturl.at/gpEJL

Հուշագրի կնքում Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի մշտական գործող աշխատանքային հարաբերություններում հավասարության հարցերով հանձնաժողովի, Երևանի և հարակից մարզերի կին գործատուների միության միջև

2024 թվականի հունվարի 26-ին տեղի ունեցավ Երևանի և հարակից մարզերի կին գործատուների միության կողմից «Գենդերային տնտեսագիտությունը և դրանց կարևորությունը Հայաստանում կանանց ձեռներեցության զարգացման համար» թեմայով համաժողով, որին մասնակցում էին Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի նախագահ Էլեն Մանասերյանը, Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի աշխատանքային և սոցիալական իրավունքների պաշտպանության բաժնի իրավաբան Աննա Բարիկյանը, Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի մշտական գործող աշխատանքային հարաբերություններում հավասարության հարցերով հանձնաժովի նախագահ Լիանա Ամիրաղյանը:

Համաժողովի մասնակիցներին ողջունի խոսքով հանդես եկավ Հայաստանի արհմիություններ կոնֆեդերացիայի նախագահ Էլեն Մանասերյանը, ՀԱԳՄ փոխնախագահ Արմեն Մարտիրոսյանը, Միջազգային մասնավոր ձեռնարկատիրության կենտրոնի Հայաստանյան մասնաճյուղի տնօրեն Լուիզա Այվազյանը: Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի աշխատանքային և սոցիալական իրավունքների պաշտպանության բաժնի իրավաբան Աննա Բարիկյանի և Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի մշտական գործող աշխատանքային հարաբերություններում հավասարության հարցերով հանձնաժողովի նախագահ Լիանա Ամիրաղյանի կողմից ներկայացվեց «Կանանց հզորացումն արհմիությունների միջոցով» թեմայով շնորհանդեսը:

Համաժողովի ավարտին համագործակցության հուշագիր ստորագրվեց Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի մշտական գործող աշխատանքային հարաբերություններում հավասարության հարցերով հանձնաժողովի, Երևանի և հարակից մարզերի կին գործատուների միության միջև:

Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիա
Հասցե՝ Վազգեն Սարգսյան 26/3
Հեռ.՝ +37410 583682
www.hamk.am
hamk@hamk.am